



### ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԳԻՏԱԺՈՂՈՎ՝

### Նվիրված ՎՊՀ հիմնադրման 45-ամյակին



Վանաձորի Հ. Թումանյանի անվան պետական համալսարանի հիմնադրման 45-ամյակին նվիրված միջոցառումները շարունակվում են:

Հոկտեմբերի 8-9-ը բուհում տեղի ունեցավ «Լեզուն և գրականությունը միջմշակութային հաղորդակցության համատեքստում» խորագիրը կրող 3-րդ միջազգային գիտաժողովը:

Միջազգային գիտաժողովի կազմը ներկայացուցչական էր. մասնակցում էին 30-ից ավելի ներկայացուցիչներ ՀՀ-ից, Արցախից, ՌԴ-ից, Լեհաստանից, Մոլդովայից, Սլովակիայից, Էստոնիայից:

Լիագումար նիստում ՎՊՀ ղեկավար, միջազգային գիտաժողովի նախագահ Գուրգեն Խաչատրյանը ողջունեց աշխարհի տարբեր բուհերից ժամանած մաս-

կերպվել են 50-ից ավելի գիտաժողովներ: Այսօր էլ բուհն իր դռներն է բացել գիտական աշխատողների, մանկավարժների և ուսուցիչների առջև: Նման լայն աշխատագրություն ունեցող գիտաժողովները գիտության ոլորտում նորարարություններից բացի տալիս են մեծ հնարավորություն միջազգային մի շարք կրթական կառույցների հետ համագործակցելու, միջբուհական կապերը խորացնելու: Այսօր մեզ հետ են մեր գործընկերներ՝ Կոստրոմայի, Կոմրատի, Տարտուի, Ադամ Միցկևիչի և Մատեյ Բեյի անվան պետական համալսարանների ներկայացուցիչները: Մաղթում են բոլորիս արդյունավետ աշխատանք»:

Ողջունի խոսքերին հաջորդեցին գիտական զեկուցումները: Ձեկուցման համար մասնակիցներին տրամադրվեց 10 րոպե, ևս 5 րոպե՝ քննարկումների համար: Առաջինը զեկուցեց Կոստրոմայի Ն. Նեկրասովի անվան պետական համալսարանի ռուսաց լեզվի ամբիոնի վարիչ, բ. գ. դ., պրոֆեսոր Իրինա Տրետյակովան: Ձեկուցման թեման էր՝ «Կենդանակերպությունների մշակութային և ազգային առանձնահատկությունները ռուսերենի դարձվածաբանությունում»: Ի. Տրետյակովան շնորհավորեց բուհի 45-րդ տարեդարձը և շնորհակալություն հայտնեց ՎՊՀ ղեկավար Գ. Խաչատրյանին, գիտության և միջազգային կապերի գծով պրոռեկտոր Արեն Սանթրյանին և ռուսաց լեզվի ամբիոնի վարիչ Կարինե Առուստամյանին՝ ջերմ ընդունելության և գիտաժողովը բարձր մակարդակով կազմակերպելու համար: Ի նշան երախտագիտության՝ նա բուհի ղեկավարին իրենց տարածաշրջանը և բուհը ներկայացնող գիրք նվիրեց:



նագետներին. «Սիրելի՛ ներկաներ, բարո՛վ եք եկել մեր համալսարան, ուրախ ենք, որ այս հանդիպումը գիտական մթնոլորտում է: Մեր բուհն արդեն 45 տարեկան է: Այս տարիներին մեր հարկի տակ կազմա-

երկրորդ զեկուցմամբ հանդես եկավ բ. գ. թ., դոցենտ Կ. Առուստամյանը. թեման՝ «Եղբայր հասկացույթով ռուսերենի և հայերենի պարենիոլոգիական միավորները»: Լիագումար նիստում վերջին զեկուց-

# ԳԻՏԱԺՈՂՈՎ ՎՊՀ-ում



Հոկտեմբերի 7-10-ին Երևանում և Վանաձորում տեղի ունեցավ հայկական քիմիական ընկերության (միջազգային մասնակցությամբ) 4-րդ գիտաժողովը,

որի կազմակերպիչներն են Հայկական քիմիական ընկերությունը, ՀՀ ԳԱԱ Օրգանական և դեղագործական քիմիայի գիտատեխնիկական կենտրոնը և Վանաձորի Հ. Թումանյանի անվան պետական համալսարանը:

Գիտաժողովը կրում էր «Ձեռքբերումներ և խնդիրներ» խորագիրը: Գիտական լուսնների մեկնարկը տրվեց հոկտեմբերի 7-8-ը Երևանում՝ ՀՀ Գիտությունների ազգային ակադեմիայում: Այնուհետ՝ հոկտեմբերի 9-10-ը, գիտական լուսնները շարունակվեցին Վանաձորի պետական համալսարանում:

Գիտաժողովին զեկուցումներով հանդես եկան Հայաստանի, Ռուսաստանի Դաշնության, Վրաստանի, Բելառուսի, Իրանի Իսլամական Հանրապետության, Գերմանիայի, ԱՄՆ-ի մի շարք գիտնականներ:

Մինչ գիտական լուսնների անցնելը բոլոր մասնակիցներին և ներկայներին ողջունեց ՎՊՀ ռեկտոր Գուրգեն Խաչատրյանը: Նա նշեց, որ «Հայկական քիմիական ընկերության» հերթական գիտաժողովն առաջին անգամ է իր շարունակությունը ստանում մեր բուհում: Այս գիտական «հանդիպման» գործում նա կարևորեց բուհի կենսաբանաքիմիական ֆակուլտետի, ինչպես նաև քիմիայի ամբիոնի վարիչ Հրաչիկ Ղազարյանի դերը: «Մեծարժոյց հյուրեր, հարգարժան ներկայներ, ողջունում եմ այս նախաձեռնությունը: Այս գիտաժողովը իսկապես խոսում է, քանի որ միտք ունի բարձրաձայնել ինչպես ոլորտի ձեռքբերումները, այնպես էլ խոսել խնդիրների մասին՝ տալով դրանց հնարավոր լուծման ուղիներ: Այն նաև կարևորում է «Վանաձորը քիմիայի քաղաք» մոռացվող անունը»:

Քիմիայի ամբիոնի վարիչ Հրաչիկ Ղազարյանը նշեց, որ մեր բուհի պատմության մեջ առաջին անգամ տեղի ունեցած միջազգային գիտական սիմպոզիումը

մեծ հնարավորություններ կտա աշխարհի տարբեր բուհերի դասախոսների, ուսանողների հետ փորձի փոխանակման. «Մենք մեր հարկի տակ հյուրընկալեցինք աշխարհի տարբեր անկյուններից ժամանած լուրջ գիտնականների, ովքեր տպավորված էին մեր հյուրընկալությամբ և հայտնեցին իրենց շնորհակալությունը բուհի ղեկավարությանը՝ գիտաժողովը բարձր մակարդակով անցկացնելու համար: Մենք պատրաստ ենք ամրապնդել մեր բարեկամական հարաբերությունները, անել հնարավոր ամեն ինչ, որ երիտասարդության շրջանում համակրանք վայելեն քիմիան, ֆիզիկան, և թողարկենք միջազգային չափանիշներին համապատասխան մասնագետներ»:

Գիտաժողովի որոշ զեկույցներ նվիրված էին կոմպոզիցիոն նյութերին, գործնականորեն կարևոր հատկություններով օժտված նյութերի և միացությունների սինթեզին, հանքային հումքի վերամշակման գործընթացների և քիմիական տեխնոլոգիայի նոր ուղղություններին, միացությունների նույնականացման նոր եղանակներին, քիմիական փոխարկման տեսության խնդիրներին և այլն:

Քիմիայի ամբիոնի վարիչ Հ. Ղազարյանը հավելեց, որ արտասահմանցի հյուրերի համար փոքրիկ էքսկուրսիա կկազմակերպվի դեպի Դիլիջան, Հաղարծին, Գոշավանք, Սևան, որպեսզի նրանք հնարավորություն ունենան զնայվելու նաև հայրենի բնությամբ և պատմամշակութային կոթողներով:

Նշենք նաև, որ գիտական զեկուցումների ժողովածուն ՀՀ Գիտությունների ազգային ակադեմիայի կողմից արդեն իսկ լույս է տեսել: ՎՊՀ-ից ժողովածուում տեղ են գտել 5 գիտական հոդվածներ:

1 ման հեղինակը հայոց լեզվի ամբիոնի վարիչ, բ. գ. թ., դոցենտ Հասմիկ Հարությունյանն էր, թեման՝ «Ազգանունների մի շերտ հայոց և ռուսաց անձնանվանական համակարգերում»:

Գիտական լուսնները շարունակվեցին երեք բաժանմունքներում՝ լեզվաբանության, լեզվի և գրականության դասավանդման և գրականագիտության:

Գիտության և միջազգային կապերի գծով պրոռեկտոր Ա. Սանթրյանը նշեց, որ տարեցտարի բուհի կողմից անցկացվող միջազգային գիտաժողովները լայն

արձագանք են ստանում, ավելացել է նաև մասնակիցների թիվը. «Մինչ գիտաժողովի անցկացումը այս տարի առաջին անգամ զեկուցումները տպագրվել են նախապես՝ բուհի միջոցներով: Աշխատել է լուրջ խմբագրակազմ՝ Գ. Խաչատրյանի ղեկավարությամբ: Եղել են նաև աշխատանքներ, որոնք մերժվել են և տպագրության չեն արժանացել: Նման գիտաժողովների անցկացումն ամրապնդում է միջազգային կապերը, բարձրանում է բուհի հեղինակությունը գիտության ոլորտում»:

# ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ԳԻՏԱԺՈՂՈՎ՝ Նվիրված Հ. ԹՈՒՄԱՆՅԱՆԻ Ծննդյան 145-ամյակին



Հոկտեմբերի 22-ին Վա-  
նաձորի պետական համալսարանում  
տեղի ունեցավ հանրապետական գիտաժողով՝ նվիրված  
Հովհաննես Թումանյանի ծննդյան 145-ամյակին:

Գիտաժողովը կազմակերպվել էր ՎՊՀ մանկավար-  
ժության ֆակուլտետի մանկավարժության ամբիոնի  
նախաձեռնությամբ: Մասնակցության համար արձա-  
գանքեցին հանրապետության տարբեր բուհերից, Ար-  
ցախից մասնագետներ, ուսուցիչներ և նույնիսկ ուսա-  
նողներ:

Հանրապետական գիտաժողովի լիագումար նիս-  
տում ներկաներին ողջունեց ՎՊՀ գիտության և միջազ-  
գային կապերի գծով պրոռեկտոր Արեն Սանթրյանը:

«Հարգելի՛ մասնակիցներ և ներկաներ, նախ  
ուզում են ձեզ փոխանցել ՎՊՀ ռեկտոր  
Գուրգեն Խաչատրյանի ողջույնները և մաղթել  
ձեզ հետաքրքրաշարժ և բովանդակալից  
լուսմներ: Հոկտեմբեր ամիսը մեր բուհի  
համար հազեցած էր գիտաժողովներով: Սա  
արդեն թվով 3-րդ գիտաժողովն է, ինչն ան-  
չափ ողջունելի է: Այս շարքում անհնար էր  
անտեսել մեծն Թումանյանի տարեդարձը,  
ով մեր՝ լռեցիներիս անձնագիրն է, մեր  
հպարտությունը: Շնորհավորում եմ բոլորիս  
և նիստը հայտարարում բացված»:

Գիտաժողովի լիագումար նիստը վարեց  
մանկավարժության ամբիոնի վարիչ, մանկավարժական  
գիտությունների դոկտոր, դոցենտ Պարզև Գևորգյանը:  
Նա նշեց, որ մեծ գրողի անունը կրող բուհը չէր կարող  
չնշել նրա հերթական տարելիցը. «Մինչ գիտաժողովի  
կայացումը հաճախ ինձ հարցնում էին ինչու՞ է հենց  
մեր ֆակուլտետը նախաձեռնել գիտաժողովի միջոցով  
անդրադառնալ Թումանյանին: Նպատակը մեկն էր՝  
հանրության լայն զանգվածներին ճանաչելի դարձնել

նաև Թումանյան  
մանկավարժին:  
Այսօր նրան ճանաչում են  
որպես բանաստեղծ, բանաս-  
տեղծ-հասարակական գործիչ, և այս  
ճանապարհին կարծես թե անտեսվում է Թումանյան  
մանկավարժը: Ներկայացուցչական այս գիտաժողովը  
եկել է լրացնելու այդ բացը»:

Լիագումար նիստում առաջին զեկուցմամբ հանդես  
եկավ մանկավարժության ֆակուլտետի դեկան, բանա-  
սիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Թերեզա  
Շահվերդյանը: Նա հողվածում Թումանյանի մի քանի  
ստեղծագործությունների տարբերակների զուգադիր  
լեզվական վերլուծություն էր կատարել:

Հաջորդ զեկուցման հեղինակը ՀՀ ԳԱԱ Մ. Աբեղյանի  
անվան գրականության ինստիտուտի  
պրոֆեսոր Վլադիմիր Կիրակոսյանն էր:  
Ձեկույցի թեման էր՝ ««Բարձրից» բանաս-  
տեղծությունը Թումանյանի ստեղծագոր-  
ծության համատեքստում»:

Լիագումար նիստի վերջին զեկուցումը  
Խ. Աբովյանի անվան հայկական պետա-  
կան մանկավարժական համալսարանի  
դոցենտ Եվա Մնացականյանինն էր՝  
«Հ. Թումանյանի մանկական ստեղծա-  
գործությունները ժամանակի գրաքննա-  
դատության գնահատմամբ» թեմայով:

Լիագումար նիստում հնչած զեկու-  
ցումներից հետո գիտաժողովը շարունակվեց երկու՝  
մանկավարժության և դասավանդման մեթոդիկաների  
բաժանմունքներում:

ՎՊՀ գիտական խորհրդի երաշխավորությամբ հան-  
րապետական գիտաժողովի զեկուցումները որպես  
գիտական հողվածներ արդեն իսկ տպագրվել են  
առանձին ժողովածուով: Ժողովածուում տեղ են գտել  
29 հողվածներ, որոնցից 15-ի հեղինակները մեր բուհից են:

**ՆԱՐԻՆԵ ՆԵՐՍԵՍՅԱՆ**







# ԱՆՑՈՒՄ ԴԵՊԻ ՑԿՅԱՆՍ ՈՒՍՈՒՑՈՒՄ



Ժամանակակից կրթության և գիտելիքի առանձնահատկությունները և մեկ անգամ կարևորում են բարձրագույն կրթություն ստանալու անհրաժեշտությունը. այսօր գիտելիքն է դառնում այս կամ այն ոլորտում բեկումնային զարգացումների հիմնական գրավականը:

Միջազգային չափանիշներին համապատասխան գիտելիքներ փոխանցելու նպատակով Վանաձորի պետական համալսարանն ընդգրկված է բազմաթիվ միջազգային ծրագրերում և նախագծերում: Բուհը ցկայան ուսումնառության հատուկ դերի ամրապնդման և մի շարք այլ խնդիրների կարգավորման համար իրականացնում է SSRULLI ծրագիրը: Վերջինիս մասին գրուցեցինք ծրագրի ղեկավար, ՎՊՀ ուսումնամեթոդական վարչության պետ, Կ. Գ. Ք., դոցենտ Անուշ Գևորգյանի հետ.

– *Տիկին Գևորգյան, ո՞րն է SSRULLI ծրագրի հիմնական նպատակը, որո՞նք են գործառնությունները:*

– «Չամալսարանների՝ որպես ցկայան ուսումնառության հաստատությունների հատուկ դերի ամրապնդում» (SSRULLI) ծրագրի հիմնական նպատակը համալսարանում ցկայան (հարատև) կրթության ռազմավարության և նորարարական մոդելների մշակումը, ներդրումը և զարգացումն է: Ցկայան (հարատև) կրթությունն անձի ամբողջ կյանքի ընթացքում ֆորմալ, ոչ ֆորմալ և ինֆորմալ կրթության մասնակցության միջոցով ձեռք բերած ուսումնառության արդյունքներն են, որոնցով անհատը ձևավորում կամ կատարելագործում է իր գիտելիքները, հմտությունները, կարողությունները և արժեքային համակարգը: Այդ նպատակով բուհում կստեղծվի կենտրոն, որը, ելնելով հասարակության և աշխատաշուկայի պահանջներից, կկազմակերպի դասընթացներ տարբեր տարիքային խմբերի մարդկանց համար:

– *Մինչ այս ի՞նչ քայլեր են արվել ծրագիրը կյանքի կոչելու համար. ովքե՞ր են ընդգրկված աշխատանքներում:*

– Նախքան ծրագիրը կյանքի կոչելը բավականին նախապատրաստական աշխատանքներ են կատարվել. նախ, մենք այցելել ենք Եվրոպայի մեր գործընկեր Չամբուրգի և Գրացի համալսարանների շարունակական կրթության կենտրոններ՝ ուսումնասիրելու նրանց ուսումնառության ձևերը, մարդկային ռեսուրսների հավաքագրման, ուսանողների անհրաժեշտ թվաքանակի ապահովման, հետադարձ կապի, որակի ապա-

հովման մեխանիզմները, նյութատեխնիկական բազան: Սակայն փորձի ուսումնասիրությունը չի նշանակում կրկնօրինակում. մենք դեռևս պետք է այն հարմարեցնենք մեր մշակույթին, մեր մտածելակերպին, մեր կարիքներին: Նշեմ, որ մենք արդեն ունենք կենտրոնի ռազմավարության նախնական տարբերակը, որը մշակել ենք ծրագրի շրջանակներում համապատասխան դասընթացներ անցնելուց հետո: Ներկայումս ռազմավարությունն ուսումնասիրվում է ավստրիացի փորձագետի կողմից:

Կենտրոնի ստեղծման նպատակով կատարվում են նախապատրաստական աշխատանքներ:

Ծրագրի իրականացման համար համալսարանում ստեղծվել է աշխատախումբ, որը կիրականացնի ընդհանուր աշխատանքները, իսկ մասնագիտական խնդիրներ լուծելու համար աշխատախումբը կընդլայնվի:

– *Ի՞նչ դժվարությունների եք բխվել այս ընթացքում, որո՞նք են առաջիկայում լուծում պահանջող հիմնախնդիրները:*

– Դժվարություններ, անշուշտ, կան, ինչպես ցանկացած ծրագիր իրականացնելիս: Սակայն այդ դժվարությունները սովորաբար տեխնիկական բնույթի են, և բուհի ղեկավարությունն անմիջապես արձագանքում է, նպաստում խնդիրների արագ լուծմանը:

– *Ե՞րբ կմեկնարկի շարունակական կրթության գործնական կիրառումը, ի՞նչ ժամկետներում է այն իրագործվելու, և ովքե՞ր կարող են դիմել:*

– Ծրագիրը երկու տարվա տևողություն ունի, բայց նրա գերնպատակը շարունակական լինելն է: Այսինքն երկու տարի հետո TEMPUS-ը չի ֆինանսավորի ծրագիրը, բայց գործընկեր համալսարանների շարունակական կրթության նորաբաց կենտրոնները կշարունակեն գործել:

Ռազմավարության վերջնական հաստատումից հետո կսկսենք դասընթացները, որոնք նախատեսվում են իրականացնել 2015 թվականին: Դիմել կարող է ցանկացած անձ, ով կհամապատասխանի որևէ



# ՄՏՈՒԳՄԱՆ ԳՐԲՈՒՅՎՆԵՐ՝ ԱՌԱՋԻՆ ԿՈՒՐՍԵՑԻՆԵՐԻՆ



Վանաձորի պետական համալսարանի մանկավարժության ֆակուլտետի դեկան Թերեզա Շահվերդյանի և ուսանողական խորհրդի նախագահ Տաթև Տոնոյանի նախաձեռնությամբ հոկտեմբերի 16-ին տեղի ունեցավ հանդիպում առաջին կուրսեցիների հետ:

Հանդիպման նպատակն էր առաջին կուրսեցիներին ծանոթացնել ֆակուլտետի գործառնություններին, բուհի ներքին կանոնադրությանը, կարգապահական նորմերին, ինչպես նաև հանձնել ստուգման գրքույկները:

Դահլիճում գ տնվող ուսանողներին և դասախոսական կազմին ողջունեց մանկավարժության ֆակուլտետի դեկան, ք. գ. դ., պրոֆեսոր Թ. Շահվերդյանը. «Սիրելի՛ ներկաներ, այսօր հատկանշական օր է հատկապես առաջին կուրսեցիների համար: Շուտով նրանց կհանձնվեն ուսանողական գրքույկները: Մեր ֆակուլտետը բուհի հիմնադրման օրվանից ամենամեծն է եղել, այսօր էլ ընդլայնում է իր մասնագիտությունների ցանկը՝ պատվով կատարելով իր առջև դրված առաքելությունը: Շնորհավորում են բոլորիդ այս կարևոր իրադարձության առթիվ և մաղթում, որ ստուգման գրքույկը՝ ձեր կյանքի կարևոր տարիների վավերագրությունը, իր էջերում ամփոփի միայն բարձր գնահատականներ:»

Ֆակուլտետի ուսխորհրդի նախագահ Տաթև Տոնոյանը («Մանկավարժություն և մեթոդիկա» մասնագիտություն, 2-րդ կուրս) ողջունեց բոլոր ներկաներին և

առաջին կուրսեցիներին ներկայացրեց ֆակուլտետը սպասարկող ամբիոնները, այնուհետ գեղեցիկ տեսանյութի միջոցով ցուցադրեց ուսանողների ուրախ առօրյան դասերից դուրս՝ էքսկուրսիաներ, սեմինարներ, բարեգործական այցեր, ինտելեկտուալ, մշակութային և մարզական բազմաթիվ միջոցառումներ, համաքաղաքային տոներ և այլն:

Ուսանողներին ողջունեց նաև ՎՊՀ ուսխորհրդի նախագահ Հենրի Սատինյանը. «Ես ուզում եմ, որ դուք ևս համալրեք մեր շարքերը, հասարակական ակտիվություն ցուցաբերեք՝ միաժամանակ առաջնային տեղ տալով մասնագիտական կրթությանը»:

«Երաժշտական կրթություն» մասնագիտության ուսանողները գեղեցիկ կատարումներով հանդես եկան:

Հանդիպման վերջում ֆակուլտետի դեկանը հանձնեց ստուգման գրքույկները: Մնում է հուսալ, որ այս ուսանողների քննական փորձերը միշտ կպսակվեն հաջողությամբ:

←4 թիրախային խմբի և կցանկանա մասնակցել այս կամ այն դասընթացին: Նշեն, որ շարունակական կրթության կենտրոնը կունենենա առանձին կայք, և E-պլատֆորմի հնարավորությունները կօգտագործվեն դասընթացներում ներգրավելու նաև սահմանափակ կարողություններով մարդկանց:

– Ցկյանս ուսումնառության ոլորտի կայացմանն ու զարգացմանը նպաստող ուրիշ ի՞նչ փոփոխություններ են սպասվում մեր բուհում, որո՞նք են նախագծին հետևող քայլերը:

– Բուհում շարունակական կրթության կենտրոնի հիմնադրումն արդեն իսկ կառուցվածքային փոփոխություն է: Շարունակական կրթության գաղափարը ներդրվել է բուհի 2014-18 թթ. զարգացման հայեցակարգում, որի համապատասխան դրույթները հիմք են հանդիսացել ծրագրի ռազմավարության մշակման համար: Նախագծի ավարտից հետո կենտրոնը պետք է շարունակի իր աշխատանքները՝ իրականացնելով կադրերի վերապատրաստումներ, վերաորակավորումներ, որոնք կհամապատասխանեն սոցիալական պատվերին և ժամանակակից աշխատաշուկայի պահանջներին:

– Ի՞նչ եք կարծում, մեր տարածաշրջանում այս նախագիծը շատ շահառուներ կունենա՞:

– Նախքան ծրագիրը TEMPUS-ի ֆինանսավորմանը

ներկայացնելը բավական լուրջ աշխատանք է տարվել տարածաշրջանի աշխատաշուկայի ուսումնասիրության ուղղությամբ: Ուսումնասիրությունները փաստել են, որ կրթության մասն ձևաչափի ներդրումը հրամայական է մեր տարածաշրջանի բուհերի համար:

– Ի՞նչ զարգացումներ և փոփոխություններ եք տեսնում ծրագրի իրագործման դեպքում մեր բուհում և ամբողջ տարածաշրջանում:

– Համալսարանը տարածաշրջանում կլինի շարունակական կրթություն իրականացնող առաջատար բուհ, որը կկարողանա հասարակության պահանջ-մունքներին և ժամանակի մարտահրավերներին համապատասխան ներդնել կրթական ծրագրեր, որոնք ավանդական կրթական ծրագրերից կտարբերվեն բովանդակությամբ, տևողությամբ, վերջնարդյունքներով:

– Շնորհակալություն:

Ցկյանս ուսումնառությունը ենթադրում է, որ մարդուն անհրաժեշտ է շարունակաբար սովորել, գիտելիքները, հմտությունները և կարողությունները հարստացնել ողջ կյանքի ընթացքում: Ինչպես նկատում եք, մեր բուհը՝ ընդունելով ժամանակակից կրթության բոլոր մարտահրավերները, քայլեր է ձեռնարկում միջազգային չափանիշներին համապատասխան մասնագետներ թողարկելու և այս մշակույթը մեր հասարակությունում արմատավորելու ուղղությամբ:

Զրույցը՝ Նարինե ՆԵՐՍԵՅԱՆԻ

Վանաձորի պետական համալսարանի մանկավարժության ֆակուլտետի «Սոցիալական մանկավարժություն» մասնագիտության ուսանողներն այս տարի ևս տոնեցին սոցիալական մանկավարժի միջազգային օրը:

Հոկտեմբերի 2-ին բուհում տոնական տրամադրություն էր: Մինչ մասնագիտական տոնին անցնելը՝ ուսանողները հանդես եկան երդման արարողությամբ և խոստացան հավատարիմ մնալ սոցիալական մանկավարժի բարձր կոչմանն ու մասնագիտական սկզբունքներին:

Միջոցառմանը ներկա էին ՎՊՀ ռեկտոր Գ. Խաչատրյանը, մանկավարժության ֆակուլտետի դեկան Թ. Շահվերդյանը, գործատուներ, տարբեր կազմակերպություններից և դպրոցներից ներկայացուցիչներ, Վանաձորի պետական համալսարանի, Երևանի պետական համալսարանի Իջևանի մասնաճյուղի և Գյումրու պետական մանկավարժական ինստիտուտի մանկավարժության ֆակուլտետի ուսանողներ, դասախոսներ:

## **ՇՆՈՐՀԱՎՈՐ ՏՈՆԴ, ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՄԱՆԿԱՎԱՐԺ**

Մասնագիտական տոնի առթիվ ներկաներին ողջունեց ՎՊՀ ռեկտոր Գ. Խաչատրյանը. «Սիրելի՛ ներկաներ, մեր հասարակությունը լայն իրազեկված չէ այս մասնագիտության մասին, քանի որ ժամանակին նման մասնագետների կարիք չի եղել: Իսկ այսօր նրանց անհրաժեշտությունն աշխատաշուկայում ակնհայտ է: Հաշվի առնելով այս ամենը՝ ՎՊՀ-ն 2006 թվականից մինչ օրս կազմակերպում է «Սոցիալական մանկավարժություն» մասնագիտությամբ ընդունելություն: Ես ուզում եմ, որ մեր հասարակությունում ըստ արժանվույն գնահատվեն սոցիալական խմբերի հետ տարվող լուրջ աշխատանքները: Շնորհավորում եմ ձեզ և ցանկանում միջոցառմանը: Հույս ունեմ, որ մեր շրջանավարտները, աշխատանքի ընդունվելով տարբեր ստորաբաժանումներում, կարողարացնեն բոլոր սպասելիքները»:

Սոցիալական մանկավարժներին ողջունեց նաև մանկավարժության ֆակուլտետի դեկան Թ. Շահվերդյանը. «Բարի գալուստ, սիրելի՛ հյուրեր և ուսանողներ: Իսկապես, սոցիալական մանկավարժի աշխատանքը բարդ ու պատասխանատու է, սակայն ես վստահ եմ, որ մեր ուսանողները պատրաստ են իրենց գիտելիքները գործնականում կիրառելու: Ես շնորհավորում եմ բոլորիդ և շնորհակալություն հայտնում մեր ֆակուլտետի դասախոս, դոցենտ Ս. Բեժանյանին՝ նման զեղեցիկ միջոցառում կազմակերպելու համար»:

Ուսանողները ցուցադրեցին պրակտիկ գործունեության ժամանակ սեփական ուժերով պատրաստած մի տեսանյութ, որը պատմում էր դպրոցական մի տղայի խնդիրների և սոցիալական մանկավարժի կատարած աշխատանքի մասին: Բերված օրինակը ևս մեկ անգամ ներկաներին համոզեց, որ ընտանիքների, սոցիալական կառույցների

առջև հառնած մի շարք հիմնահարցեր կարող են լուծում ստանալ՝ օգտագործելով սոցիալական մանկավարժի ներուժը:

Սոցիալական մանկավարժն ուսումնասիրում է անձի դաստիարակության և ձևավորման վրա սոցիալական միջավայրի ներգործությունը: Սոցիալական մանկավարժ գլխավոր գործառույթն է՝ ընդհանրացնել հասարակության կուտակած սոցիալական փորձը, ուսումնասիրել իրական պատմական պայմաններում մարդուն կյանքի նախապատրաստելու հիմնախնդիրները՝ հաշվի առնելով հասարակական խմբերի շահերը: Ընդ որում՝ ուշադրության են առնվում երեխայի արժեքային կողմնորոշումները, որոնք ձևավորում են ընտանիքը, դպրոցը, միջավայրը, ինչպես նաև բուն անձի դիրքորոշումը՝ որպես ինքնակատարելագործման և միջավայրի փոփոխության սուբյեկտ:

Միջոցառման կայացման և հրավերի համար իր շնորհակալանքի խոսքը հայտնեց նաև ԵՊՀ Իջևանի մասնաճյուղի դոցենտ Վ. Բրուտյանը. «Սիրելի՛ ներկաներ, ձեզ եմ հղում մեր մասնաճյուղի տնօրենի և պրոֆեսորադասախոսական անձնակազմի շնորհավորանքները նախ համալսարան դառնալու կապակցությամբ: Այս կրթօջախը միշտ պատվով է



կատարել իր առաքելությունը և հիմա էլ շարունակում է այդ գործը: Թող ինձ ներեն դահլիճում գտնվող գյուներեցիները, սակայն, ըստ իս, լռեցիներն ամենաբարի, ամենամեղմ ժողովուրդն են, որոնց գիտության սերուցքը պարփակված է այս բուհի պատմության մեջ: Շնորհավորում եմ նաև բոլոր սոցիալական մանկավարժներին: Ինչու՞ եմք այսօր կարևորում այս մասնագիտությունը: Սա խորհրդային մանկավարժության թերությունն էր, որն աստիճանաբար շտկվում է: Այսօր գիտակցվում է, որ միայն դպրոցը քիչ է երեխայի ճիշտ դաստիարակության համար: Ես ուզում եմ, որ մեր ուսանողները պրակտիկայի շրջանակներում զորամասեր, մանկատներ, ծերանոցներ և այլ կառույցներ հաճախելով մտորեն կարող են արդյոք ճիշտ աշխատանք տանել նրանց հետ»:

Շնորհավորանքի խոսքերն ընդմիջվում էին ՎՊՀ մշակույթի կենտրոնի շնորհալի սաների զեղեցիկ կատարումներով:

Միջոցառման վերջում 3 բուհերի ներկայացուցիչները շտապեցին համտեսել տոնական տորթը և անցան մասնագիտական քննարկումների, փորձի փոխանակման ավելի անմիջական փուլի:



# ՄԻԼՎԱ ԸՈՎՇԱՆՆԻՍՅԱՆ

Մանուկների համար ստեղծագործելը մեծ փորձություն է: շնորհակալ եմ, որ այն գնահատվեց, և «Լավագույն բանաստեղծությունների շարք» անվանակարգում ժյուրիի բոլոր վեց անդամների միակարծիք որոշմամբ ինձ շնորհվեց առաջին մրցանակը: Երջանիկ եմ, որ բարեկամացա «մանուկների աշխարհին», որտեղ աշխարհը նկարվումը կառուցվում է երևակայական և իրականի չտարբերակված աշխարհի գաղափարով, որտեղ առօրեականն անգամ նոր կեցություն, արտիմաստավորման երանգներ է ստանում: Այդ է հաստատում և այն, որ չնայած պոետական աշխարհի տարաբնույթ նորամուծություններին՝ մանկական բանաստեղծությունը հավատարիմ մնաց հանգի, ռիթմի կարևորությանը: Ռիթմի, որը, թերևս, տիեզերքի բարձրագույն օրենքն է, առաջին երկխոսությունն աշխարհի հետ: Չէ՞ որ մեր շուրջն ամեն ինչ ռիթմիկ է՝ սկսած մեր սրտի զարկերից: Ինչևէ: Թող այս գիրքը փոքրիկ նվեր լինի իմ երկրորդ տան՝ Վանաձորի պետական համալսարանի 45-ամյա տարելիցին՝ ուսանողների հետ դեռ երկխոսելու, դասախոսներին՝ սեփական մանկությունը վերակենդանացնելու հույսով: Թող մեր նորամանուկ համալսարանն էլ ունենա երևակայական թռիչք և մերօրյա արժեքների կորստի, անհասկանալի փորձությունների խառնաշփոթ ժամանակներում կարողանա ստեղծել իր «Փոքրիկ մոլորակը»՝ նման մանկական գունագեղ աշխարհի, որտեղ անհնարին ոչինչ չկա: չէ՞ որ հենց մեզ է տրված նվիրյալ սերունդ կրթելու դժվարին և շնորհակալ գործը:



Նա շֆ է սա,  
Նա շֆ է սա.  
Փողոցում այն  
Փղին սեսա,  
Այն նույն փղին,  
Յիշե եմ ասում,  
Որ սեսել եմ  
Նենց կրկեսում...  
Դե, փղիկն էլ  
Ինձ քանաչեց՝  
Աչքը թարթեց,  
Պողը շարժեց,  
Ասես ասաց  
Փղավարի.  
Վաղը նորից  
Կրկե՛ս արի:



Թե լաց լինես, անձն կգա՝  
Բակ շի թողնի քեզ մայրիկը,  
Թե բղավես, ոտք խփես՝  
Կորոսա ողջ երկինքը.  
Լավ է ուրախ ժողասա, Անի՛,  
Որ արևը քեզ ողջունի...

## Ի՞նչ շնիկք

Քաշ է, ֆաշ է ի՞նչ շնիկը,  
Պահադասն է մեր բակի,  
Փրկեց խեղդվող ի՞մ սիկնիկին  
Խենթ ջրերից գեսակի:

Ճանաչում է մեր հավերհն,  
Գտնում ու բակ է ֆշում,  
Դե, նրանք էլ շուտ են կորչում,  
Նավ են, ոչինչ չեն հիշում:

Օրոհ ասեմ ի՞մ սիկնիկին,  
Մի՞նչն քնի՛ սղասում,  
Ու ի՞նչն եմ բակ, ի՞մ սիրունիկ  
Շնիկի հես վազվզեմ...

## Ակարում եմ

ես Նուսիկն եմ, Նուսիկն եմ,  
Տեսե՛ք ինչքա՛ն ստաիկն եմ,  
Սեղանի մոտ, լուռ ու մունջ  
Նկարում եմ մի կամուրջ,  
Կարմակսուց բաղիկիս,  
Ակնոցավոր սասիկիս,  
Մի դրոշակ, մի գնդակ,  
Ու մի փիսո՛ւ ծառի սակ:  
Բայց, տե՛ս՝ մոռան ի՞մ կատուն  
Ո՛նց է հոնքերը կիսում:  
Նկարում եմ ու ասում.  
- Ես փիսոն ի՞նչ է ուզում:  
Իսկ նա նայում է, նայում,  
Դառնում է ինձ, մկավում.  
- Միառ՛, կուզեմ մի մկնիկ՝  
Փոքրիկ-փոքրիկ ու թմբիկ:

Դե՛, դո՛ք տեսա՞ր, երեխե՛ր,  
Լա՛վ հիշեցե՛ք ես բանը.  
Եթե փիսիկ նկարե՛ք,  
Չմոռանա՛ր մկանը:

## ու՛ր կորալ

Օդում դարեց,  
Իջավ բակ  
Օճառի մի ողորակ,  
Վազեց՝ բռնի մեր Մարան,  
Վազեցին Սոսն ու Արան,  
Վազեց Գոռը հիկիկ:

Բայց փուշիկը այդ թեթև  
Ասես գեսնի սակ անցավ,  
Թե՛՛ հենց օդում շփացավ,  
Դե ասե՛ք ի՞նչ, ի՞նչ եղավ,  
Պողոջակը ո՛ւր կորավ:

## մեղվիկն

Այսօր բզզան, բզբզան,  
Այսօր անվերջ սզզան,  
Ձայնը շկա՛ ինձ կա,  
Չգո՛ւյշ, հանկարծ մոտ չգա...

Բայց տես, կարես, հայնվեց.  
Շուրջս բզզաց, բզբզաց,  
Խայթեց, մասիկս խայթեց  
Ու դեռ ինձ սզզաց...



# Միջոցառում՝ անկախության 23-ամյակի առթիվ

Սեպտեմբերի 20-ին Վանաձորի Գ. Թումանյանի անվան պետական համալսարանում տեղի ունեցավ ՀՀ անկախության 23-ամյակին նվիրված միջոցառում: Շնորհավորանքի խոսքով հանդես եկան համալսարանի ռեկտոր Գուրգեն Խաչատրյանը, ֆիզիկական դաստիարակության տեսության և մեթոդիկայի ամբիոնի վարիչ Վանդոս Ղարազյոզյանը, ուսխորհրդի նախագահ Հենրի Մատինյանը: Համալսարանի բակում կազմակերպվեցին սպորտային խաղեր՝ պարանի ձգում, աքլորակռիվ, վոլեյբոլ, կշռաքարերի բարձրացում: Մրցույթներն անցկացվեցին ֆակուլտետների միջև: Ուսանողները ցուցաբերեցին ակտիվ մասնակցություն: Նրանք հաղթանակի համար պայքարում էին բարձր ոգևորությամբ:

Համալսարանի ուսանողուհի Նարինե Բաղդասարյանը ասաց. «Կարևորում ենք նման միջոցառումների կազմակերպումը, քանի որ երիտասարդ սերնդին պետք է հիշեցնել, թե ինչ գնով է ձեռք բերվել այդ անկախությունը»:



Բազմաբնույթ խաղերից հետո հնչեցին հայրենասիրական երգեր: Ուսանողները պարեցին հայկական քոչարու խրոխտ պարեղանակի ներքո:

Վանաձորի պետական համալսարանում անկախության առթիվ նմանատիպ միջոցառումներ կազմակերպվում են արդեն 14 տարի: Տարեցտարի աճում է ուսանողների մասնակցության ցանկությունը և հետաքրքրությունը համալսարանի միջոցառումների հանդեպ:

**Մարինե ՍԱՐՅԱՆ**  
«Լրագրություն», 2-րդ կուրս

## ԵՊՀ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ՀՐԱՏԱՐԱԿՎԱԾ ՆՎԻՐԱԲԵՐՎԱԾ ԳՐՔԵՐԻ ՑՈՒՑԱԿ

1. Ստեփան Պողոսյան – Հայոց ցեղասպանության պատմություն, հատ. 2, Հայաստանի հրատարակչության հետ համատեղ, 2009 թ.
2. Ստեփան Պողոսյան – Հայոց ցեղասպանության պատմություն, հատ. 3, 2011 թ.
3. Դենի դը Ռուժմոն – Սերը և Արևմուտքը (թարգմ. Ալ. Թովչյանի), 2007 թ.
4. Աշոտ Սուքիասյան – Հայոց լեզվի հոմանիշների բացատրական բառարան, 2009 թ.
5. Ալբերտ Խառատյան – Կոստանդնուպոլսի հայ գաղթօջախը (XV-XVII դարեր), 2007 թ.
6. Բաբկեն Հարությունյան – Խորհրդահայ թատրոնի տարեգրություն, հատոր 3, 2008 թ.
7. Վահրամ Ղարախանյան – Գալուստ Կյուլպենկյանի հիմնարկության հայանպաստ գործունեությունը. 1956-2006 թթ., 2008 թ.
8. Ավետիք Իսահակյան – Երկերի լիակատար ժողովածու, հատոր IV, Պոեմներ, 2008 թ. – 1
9. Ավետիք Իսահակյան – Երկերի լիակատար ժողովածու, Անտիպ և հետմահու տպագրված բանաստեղծություններ, հատոր 2, 2011 թ.
10. Ստեփան Մելիք-Բախշյան – Հայոց պաշտամունքային վայրեր, 2009 թ.
11. Հրանտ Թամրազյան – Երկեր, հ. ք, 2009 թ.
12. Հրանտ Թամրազյան – Երկեր, հ. գ, 2010 թ.
13. Հրանտ Թամրազյան – Երկեր, հ. դ, 2010 թ.
14. Ստեփան Մալխասեանց – Հայերեն բացատրական բառարան, չորս հատորով, հատոր I (Ա-Ե), 2010 թ.
15. Ստեփան Մալխասեանց – Հայերեն բացատրական բառարան, չորս հատորով, հատոր II (Զ-Կ), 2010 թ.
16. Ստեփան Մալխասեանց – Հայերեն բացատրական բառարան, չորս հատորով, հատոր III (Հ-Ո), 2010 թ.

17. Ստեփան Մալխասեանց – Հայերեն բացատրական բառարան, չորս հատորով, հատոր IV (Չ-Ֆ), 2010 թ.
18. Գառնիկ Ստեփանյան – Մղձավանջային օրեր, 2009 թ.
19. Գուրգեն Մահարի – Սիբիրական, 2009 թ.
20. Ռուբեն Ղազարյան, Հենրիկ Ավետիսյան – Միջին հայերենի բառարան, երկրորդ հրատարակություն, 2009 թ.
21. Ռուբեն Ղազարյան – Լեզվաբանական ուսումնասիրություններ, 2010 թ.
22. Հրաչյա Աճառյան – Պոլսահայ անգիր բանահյուսություն, 2009 թ.
23. Հակոբ Մանադյան – Երկեր, Բանասիրական ուսումնասիրություններ, հատոր Է, 2010 թ.
24. Հակոբ Մանադյան – Երկեր, հատոր Ը, Բնագրագիտական աշխատություններ, 2011 թ.

«Վանաձորի պետական համալսարան»  
երկշաբաթաթերթ  
Վկայական՝ 727  
2001, ՀՀ, Վանաձոր,  
Տիգրան Մեծի 36  
Էլ. փոստ՝ vsu69@mail.ru

Հիմնադիր՝ ՎՊՀ  
Հրատարակիչ՝  
«Վանաձորի պետական համալսարան»  
երկշաբաթաթերթի խմբագրություն  
Տպաքանակը՝ 300  
Տպագրվել է ՎՊՀ տպարանում

Խմբագիր՝ Լևոն ՍԱՐԳՍՅԱՆ  
Պատասխանատու՝ Աճի ԽԱՉԱՏՐՅԱՆ  
Համակարգչային ձևավորումը՝ Աշխեն ԳԱԼՍՏՅԱՆԻ